ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՃԳՆԱԺԱՄԻ» ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ԳՈՆՍԱԼՈ ԳՈՒԱՐՉԻ ՎԵՊԵՐՈՒՄ

ՍԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հոդվածը նվիրված է կատալոնացի գրող Գոնսալո Գուարչի «Հայկական տոհմածառը», «Հայոց կտակը» և «Սպիտակ լեռը» վեպերի քննությանը, որոնցում հեղինակը անդրադարձ է կատարել Հայոց ցեղասպանությանը: Եռագրության մեջ Հայոց ցեղասպանությունը դիտարկվում է ոչ միայն որպես համամարդկային հիմնախնդիր, այլև XX դարի սկզբին բնորոշ համընդհանուր բարոյական արժեքների անկումայնության դրսևորում:

Բանալի բառեր – եռագրություն, Հայոց ցեղասպանություն, հումանիզմի ճգնաժամ, համամարդկային հիմնախնդիր:

Իսպանական գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի նկատմամբ հետաքրքրության ձևավորման գործում իր մեծ ներդրումն ունի բարսելոնացի գրող և ճարտարապետ Գոնսալո Էռնանդես Գուարչը (1945): Նախ՝ 2001թ. հրատարակեց «Հայկական տոհմածառը» վեպը, ինչը եղեռնի պատմավիպական նկարագրությունն է՝ մտացածին կերպարներով, ցեղասպանության պատմության վրա հիմնված փաստերով ու իրադարձություններով, որում գրողը մի հայ գերդաստանի ողբերգական պատմությամբ պատկերում է ցեղասպանության սարսափներն ու ցավը, ավելին՝ երկրի պատմությունը բեկվում է մի քանի ընտանիքների ճակատագրում: 2008թ. Գուարչը հրատարակեց Հայոց ցեղասպանության մասին ևս մի գիրք, ինչը գրողի կողմից թեմայի հանդեպ ունեցած հետաքրքրության վկայությունն է: «Հայոց կտակը» Գուարչի եռագրության երկրորդ գիրքն է՝ պատմավեպ-հուշագրություն, որն ընդգրկում է երեսունհինգ տարվա պատմություն՝ 1885-1920թթ.: Երրորդ՝ «Սպիտակ լեռը» վեպը (2008) տարածաժամանակային ընդգրկման կտրվածքով մեծամասշտաբ գործ է (պատկերում է 1909-1940թթ. իրադարձությունները)՝ հարուստ ու հետաքրքրական իրողությունների դրվագումներով: Հետևաբար՝ մենք գործ ունենք էպիկական ընդգրկմամբ վեպ-ժամանակագրության հետ, համենայնդեպս դիպաշարի կառուցման և պաթոսի տեսանկյունից վեպի բնորոշ գիծը էպիկականությունն է:

Գուարչը Հայոց ցեղասպանության խնդրին նվիրված իր վեպերում փորձում է գտնել չարիքի պատմական, էթնո-կրոնական արմատները, խորանում հայ ազգի պատմամշակույթի մեջ: Կատալոնացի գրողը, նորովի բացահայտելով իսպանացի ընթերցողի համար հայի ինքնությունը, նրա պատմական հա-

ռուստ անցյալի անծանոթ էջերը, տեղափոխում է այդ ընթերցողին «չբացահայտված տարածք» (terra incognita):

Վեպերում Գուարչը պատմության խրթին հարցերը ներկայացնում է ժամանակակից խնդիրների մեկնակետից և պատմական կոնֆլիկտների շարունակությունը տեսնում է ներկայի մեջ: Պատմական թեմայի անդրադարձը հուշում է անցյալի իրադարձությունների արժևորման ձգտումն ու դրանց հիման վրա ներկայի կառուցումը: Պատմական թեմայով վեպերի դեպքում շատ կարևոր է ժամանակային տարբեր շերտերի ճիշտ և համաչափ համադրումը, տվյալ պարագայում՝ գեղարվեստական ժամանակի ու ներկայով պատմող հեղինակի ժամանակի միջև: Ասել է, թե հստակ ու հիմնավորված պետք է լինի երրորդ դեմքով պատմողի ներկայի ու դիպաշարային պատմության հեռավորությունը:

Այսպիսով, եռագրության մեջ կերպավորված է համաշխարհային պատմության ամենադրամատիկ ու ամենաողբերգական ժամանակահատվածը, ինչը լավագույնս արտացոլված է Նիցշեի՝ մարդու հոգևոր պաշարների ու արժեքների ոչնչացումն ազդարարող «աստված մեռած է»[1], Պոլ Վալերիի «եվրոպական հոգու հոգեվարք»[2] բնութագրումներում: Ըստ գրողի՝ Նիցշեի գերմարդու, Ջորջ Վալե դը Լապուժի արիականության, կոմս Գոբինոյի ոչ միատեսակ ռասաների մասին տեսությունները դարձան մարդկության դավանած արժեքների քայքայման, մարդկության անկումային տրամադրությունների ու դաժանության նոր աղբյուր, ինչի պատճառով սովորական դարձան մարդկային զանգվածների անիմաստ վերացումը, նյութական ու հոգևոր արժեքների անխնա ոչնչացումը, մարդկության ճակատագրի նկատմամբ անտարբերության խորացումը: Այս հատկանիշները պայմանավորեցին դարավերջը սահմանագծային (հին աշխարհի կործանման և նորի սկզբնավորման մասին) որակելու և Նիկոլայ Բերդյաևի կողմից XX դարը որպես «ճգնաժամի դար», ասել է, թե «մարդկային ամբողջական կերպարի մահվան»[3] հանգամանքը փաստելու պատճառները:

Աշխարհի քաոսային ընկալումը, որտեղ բացակայում են արժեքային չափանիշներն ու իմաստային կողմնորոշիչները, խորացնում է հավատքի և նախկին արժեքների ճգնաժամի գիտակցումը: Գրականագետ Հենրիկ Էդո-

---

[1] **Նիցշե Ֆ.**, Զվարթ Գիտությունը, Երևան, 2005, էջ 154:

[2] **Валери П.** Об искусстве. Москва, 1976, стр. 47.

[3] **Бердяев Н.** Смысл истории. Москва, 1990, стр. 134.

յանն այս երևույթների առաջացումը բացատրում է «Քրիստոս-Աստծու անհետացման փաստով»՝ նշելով, որ «Քրիստոսի բացարձակ հավասարակշռության խախտումը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին մարդուն հասցնում է աշխարհում նրա գոյության անհետացման»[4]: Ընդ որում Նիցշեի բանաձևումը նույնպիսի դիտակետից է ներկայացնում գերմանացի մեկ այլ նշանավոր փիլիսոփա Մարտին Հայդեգերը: Ըստ Հայդեգերի՝ «աստված մեռած է» դարակազմիկ բնորոշումը պետք է հասկանալ ոչ թե անհավատության իմաստով, այլ որպես գերագույն արժեքների արժեզրկում[5]: Գոնսալո Գուարչի բնորոշումով սա «հումանիզմի ճգնաժամ»[6] է, որի համատեքստում գրողը քննում է Արևելքում, մասնավորապես Օսմանյան կայսրության տարածքում տեղի ունեցող իրադարձություններն ու հատկապես հայերի բնաջնջումը, Եվրոպայի անտարբերությունը, ֆաշիզմի առաջացումն ու դրա սարսափելի դրսևորումների հետևանքները մարդկային ճակատագրերի վրա: Այսպիսով, գրողը դիպաշարային զարգացումը տանում է այնպես, որ շարունակ առիթներ են ստեղծվում՝ ամբողջ տարածաշրջանի քաղաքական իրավիճակն ընդգրկուն ներկայացնելու համար, ինչը պատճառաբանվում է նրանով, որ XX դարի սկզբին ամբողջ մարդկությունն էր հայտնվել սահմանային իրավիճակում: Տեղին է հիշել, որ XX դարի սկզբի պատմական իրադարձությունները համընդհանուր բարոյական արժեքների անկումայնության դրսևորում է ներկայացրել նաև ամերիկացի գրող Էլջին Գրոսքլոուսը Հայոց ցեղասպանությանը նվիրված «Արարատ» վեպում: «Էլջին Գրոսքլոուսը աներկբայորեն հավատում է, որ իր նկարագրած ոճիրները հնարավոր դարձան Եվրոպայում ստեղծված համընդհանուր բարոյահոգեբանական և քաղաքական մթնոլորտի պատճառով: Նա գտնում է, որ XIX դարի փիլիսոփայական տարբեր ուղղությունների ազդեցության հետևանքով կրոնի ու բարոյականության էության և նշանակության նկատմամբ եվրոպական հասարակության մեջ խոր արմատներ ձգած նիհիլիստական պատկերացումները չարիք են սերմանում մարդու հոգեբանության ու գործունեության մեջ»[7]:

---

[4] **Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, Երևան, 2009, էջ 172:

[5] Տե՛ս **Հայդեգեր Մ.,** Նիցշեի «Աստված մեռած է» խոսքը, Նիցշե Ֆ., «Զվարթ Գիտությունը» գրքում, Երևան, 2005, էջ 374-381:

[6] **Guarch H. G**. La montaña blanca. Barcelona, 2009, p. 439.

[7] **Մակարյան Ա., Թումանյան Ս.,** Էլջին Գրոսքլոուսը և իր «Արարատ» վեպը, ՎԷմ, 1/14/, 2013, էջ 12:

Այս համատեքստում Գուարչը ներկայացնում է հայ և թուրք ժողովրդին, տարբեր խավերի հայ կերպարների օգնությամբ պատկերում հայերի վիճակը սուլթանական կայսրությունում, նրանց ձգտումներն ու հոգսերը և վերակենդանացնում է պատմաշրջանն իր մասշտաբայնությամբ: Վեպերի բազմապլան դիպաշարում պատկերված են բազմաթիվ թուրք, գերմանացի քաղաքական գործիչների, հայ մտավորականների կերպարներ: Ոմանք մտացածին են, ոմանք պատմական նախատիպեր ունեն կամ հենց պատմական անձինք են, ովքեր ամբողջացնում են թուրքական քաղաքականության համապատկերը՝ օգնելով գրողին ցուցադրել կյանքի սոցիալական ներառման լայնությունը, իրականության արտացոլման հավաստիությունը:

Եռագրությանը բնորոշ է բարոյական արժեքների կարևորումը: Սպանությունը, դաժանությունը, բռնությունը նախևառաջ պատկերված են որպես XX դարի մարդկային ճգնաժամի բնութագրիչներ, որոնք ծնում են բարոյական կարևորագույն հարցադրումներ:

Գոնսալո Գուարչը հետևողականորեն համեմատության մեջ է դնում Արևմուտքն ու Արևելքը, հոգեբանական, մտածողության ու գաղափարական տարբերությունները՝ հայ ժողովրդի պատմությունը դիտարկելով համաշխարհային պատմության համատեքստում: Իր երեք վեպերում գրողը ներկայացնում է երկարատև ժամանակահատվածի պատմություն, որի շրջանակում ցեղասպանության բազմատեսանկյուն քննությամբ ստեղծել է բազմաշերտ ու պոլիֆոնիկ վեպեր, առաջադրել պատմական հիշողության կարևորման հիմնախնդիրը:

Պատմական այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք էին Հայոց ցեղասպանությունը, հրեաների հոլոքոստը, միջուկային զենքի կիրառումը, ցնցում էին ամբողջ աշխարհի համար: Դա բերեց ոչ միայն ամբողջ արժեհամակարգի, այլև ստանդարտ մտածելակերպի, աշխարհի դրվածքի վերանայմանը: Ումբերտո Էկոն որոշ չափով դրա հետ է կապում նաև պոստմոդեռնիստական գրականության ծնունդը. «Ամեն դարաշրջան երբևէ մոտենում է ճգնաժամի շեմին: Անցյալը ճնշում է, սպառնում է: Պատմական ավանգարդը քայքայում, դեֆորմացնում է անցյալը: Բայց գալիս է մի սահման, երբ ավանգարդին այլևս տեղ չի մնում գնալու: Եվ այդժամ նրան փոխարինելու է գալիս պոստմոդեռնիզմը. եթե անցյալը հնարավոր չէ վերացնել, այն պետք է վերաիմաստավորել»[8]:

---

[8] **Эко У**. Заметки на полях "Имени розы"// Имя розы. Москва, 1989, стр. 461.

Վեպի կառուցման առումով Գ.Գուարչի ստեղծագործությունն աչքի է ընկնում մոդեռնիստական (էկզիստենցիալ խնդիրներ, գիտակցության հոսք), ինչպես նաև պոստմոդեռնիստական տարրերի (պաստիշ, գոյաբանական հարցեր, դրվագայնություն) կիրառում, որոնք նպաստում են առավել խոր ու ազդեցիկ արտացոլել հայերի ազգային ողբերգության ողջ չափը: Այսպես, «Հայկական տոհմածառը» վեպը կառուցված է հետաքրքիր ու նորագույն գրականության մեջ լայն տարածում գտած խաղային եղանակով, ինչպես նաև հանելուկայինի, առեղծվածայինի տարրի կիրառումով, որը շատ բնորոշ է պոստմոդեռնիստական գրականությանը: Խաղային տարրն էլ արտաքին, ձևային առումով կապված է ստեղծագործության շարադրանքի դրվագայնության հետ: Դրվագայնությունն ու ծայրաստիճան սուբյեկտիվությունն արտացոլում են գոյաբանական ճգնաժամը կամ ֆրոյդիստական ներքին կոնֆլիկտը: Սրանք են, որ անհատի համար ստեղծում են քաոս, և արվեստագետն անզոր է այդ քաոսի առջև, «...նրա միակ ապաստանը խաղն է քաոսի մեջ: Սակայն պոստմոդեռնիստական գրականության մեջ խաղային ձևը դառնում է առաջնային՝ ոչ միայն խախտելով ստեղծագործության ընդհանուր դասական կառուցվածքը, այլև ետին պլան մղելով իմաստային տարրը»[9]:

Այսպիսով, եթե Գոնսալո Գուարչի առաջին երկու գրքերում ցեղասպանությունն ավելի շատ ընկալվում է որպես միայն մեկ ժողովրդի կորուստ, ապա եռագրության վերջին գրքում այդ ամենը դիտարկվում է որպես համընդհանուր ողբերգություն, որն իր հետքը թողել է համաշխարհային պատմության մեջ՝ ներկայացնելով մահմեդականության ու քրիստոնեության, Օսմանյան կայսրության ու վերջինիս ենթակա ժողովուրդների բախման, առհասարակ աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում, որտեղ առաջին պլանում մարդն է՝ միայնակ ցանկացած բռնության դեմ, անտեսված իր ցավի հետ: Խոսքը ոչ միայն Առաջին աշխարհամարտի պատճառած նյութական ավերածությունների ու մարդկային զոհերի մասին է, այլև մարդկային մտածողության մեջ կատարված փոփոխությունների, կորուսյալ սերնդի: Պատերազմի անհեթեթությունն ու պարտությունը, ցեղասպանությունը վեպում ներկայացված են որպես համաշխարհային չարիքի խորհրդանիշ: Ըստ գրողի՝ այն իշխանության ու հավակնությունների աբսուրդ ցուցադրում է, «...պատերազմը և նրա սարսափելի հետևանքներն այն ամենի դաժան ցուցադրումն են,

[9] Intervención de Gonzalo Torrente Ballester // Novela española actual. Madrid, 1977, p. 107.

թե ինչի է ընդունակ հասնել մարդը սեփական նկրտումների բավարարման համար»[10]:

АРМЯНСКИЙ ГЕНОЦИД КАК ПРОЯВЛЕНИЕ “КРИЗИСА ГУМАНИЗМА” В РОМАНАХ ГОНСАЛО ГУАРЧА

СИРАНУШ КАРАПЕТЯН

Статья посвящена анализу романов каталонского писателя Гонсало Гуарча “Армянское древо”, “Армянское завещание” и “Белая гора”, в которых автор обратился к теме армянского геноцида.

В трилогии геноцид рассматривается не только как всечеловеческая проблема, но и как спад общих нравственных норм начала 20-ого века.

Ключевые слова **–** трилогия, армянский геноцид, гуманистический кризис, всечеловеческая проблема.

THE ARMENIAN GENOCIDE AS A MANIFESTATION OF THE “CRISIS OF HUMANISM” IN GONZALO GUARCH'S NOVELS

SIRANUSH KARAPETYAN

This article is dedicated to the study of the three novels by the Catalonian writer Gonzalo Guarch: "The Armenian Family Tree", "The Armenian heritage" and "The White Mountain". The trilogy pertains to the Armenian genocide, which is viewed not only as an all-inclusive problem of humanity but also as a manifestation of the decadence of general moral values, common to the beginning of the 20th century.

Key words – trilogy, Armenian genocide, humanity crisis, international problem.

---

[10] **Guarch H. G**. La montaña blanca, p. 388.